Օրինակ Դաշնագրութեան վասն Հարաւնեաց։

ԳԼՈՒԽ ԶԲ.

Յայտնի լինի ամենեցուն, որ մեք Աբրահամ որդոյ Ադամի գեղջէն Կարփու, և Հեղիսաբեթ դուստր Եղիազարի գեօղէն մուղնու ուխտ եդաք և դաշինս հարսանեաց մէջ մեր հաստատեցաք, որ ես Աբրահամս հարստութենէ իմմէ այսօրս մին հազար հայոց դահեկան երծաթի տէր և ժառանգ արարի պատուելի Եղիսաբէթ դուստր Եղիազարի, որ զոր ինչ ձախորդութիւն 'ի վերայ ստացուածոց իմոց, և կամ եթէ վախճան կենաց իմոց հասանի, և կամ զոր ինչ աջողութիւն որ զամենայն աւուրս կենաց իմոց հասանիցի 'ի վերայ ստացուածոց իմոց զամենայն զոր ինչ զուտ և յստակ մնացորդէ իմմէ առաջին ժառանգորդն 'ի ստացուածոց իմոց մին հազար երծաթէ դահեկան տէր է պատուելի Եղիսաբեթ դուստր Եղիազարին զի տիրեսցէ և վայելեսցէ որպէս ինքն կամի, նաև ուխտ եդի և պարտական իմ անձն արարի առ ասացեալ պատուելի Եղիսաբեթն, որ ներքոյ թուէն վեց շաբաթ ժամանակաւ ամուսնանամ ընդ իւր ըստ Օրինօք հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ և զամենայն աւուրս կենաց իմոց ես և ծնեալք յինէն որդիք և դստերք զոր ինչ Տէր Աստուած տացէ մեզ կալով մնամք հաստատուն